

**ՄԱՐՄՆԱՐՄԱՏ
ԴԱՐՁՈՒԱԾՔՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ԵՒ ՆՐԱՆՑ
ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐԸ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՀԻԹ»
ՎԻՊԵՐԳՈՒՄ**

Մարմնարմատականութիւնը (սոմատիզմ) բառապաշարային-դարձուածաբանական դաշտին բնորոշ հասկացութիւն է, որն ունի «մարմնի մաս»ից արմատ նշանակութիւնը: Բառապաշարի մարմնարմատ (սոմատիկ) շերտը լեզուաբանների ուսումնասիրութեան առարկայ է դարձել ի. դարի վերջում եւ իԱ. դարի սկզբում. «սոմատիզմ» եզրոյթն առաջին անգամ գործածել է էստոնացի լեզուաբան Ֆ. Գակկը¹: Հաղորդակցական գործընթացներում կարեւոր դեր են կատարում մարմնարմատ դարձուածքները. մարմնի մասեր անուանող բառերը դարձուածքների կազմութեան մէջ ամէնից յաճախ գործառուող բաղադրիչներից են, ինչպէս՝ գլուխ, սիրտ, ձեռք, ոտք, աչք, ականջ, ֆիբ, բերան, լեզու, ճակատ, վիզ, փոր եւ այլն:

Մարմնարմատ դարձուածքների առատութիւնը գրեթէ բոլոր լեզուների դարձուածաբանական համակարգերի բնորոշ առանձնայատկութիւններից է: Նրանք կարող են դառնալ կայուն կապակցութիւնների կամ դարձուածքների բաղադրիչներ՝ հանդէս գալով փոխաբերական նշանակութիւններով, որոնք ամրագրուած են նրանց հնամենի ըմբռնումներում: Իւրաքանչիւր մշակոյթում հնագոյն ժամանակներից մարմնի մասերին վերագրուած խորհրդանշանները լաւագոյնս արտացոլուած են առած-ասացուածքներում եւ դարձուածքներում²:

1 ФЕДОРОВА, М., НИКОНИОК М., *Фразеологические соматизмы как средство вторичной номинации лексико-семантической системы немецкого языка*, Беларусь, Журнал Гродненского государственного медицинского университета, № 3, 2012, 81.

2 ԲԵԴԻԲԵՆ, Պ. Ս., *Ժամանակակից հայերէմի դարձուածաբանութիւն*, Երևան 1973, 110:

Մարմնարմատ դարձուածքներն առաւել ցայտուն արտայայտում են մարդու ինքնագիտակցութեան հնագոյն պատկերացումներն իր մարմնի գործառոյթների վերաբերեալ, որ պահպանուել են ժողովրդական աւանդազրոյցներում:

Մասնագիտական գրականութեան մէջ մարմնարմատ դարձուածքները դիտարկուել են տարբեր տեսանկիւնից: Որպէս աշխարհի դարձուածաբանական քարտէզի բաղադրիչ՝ սոմատիկ դարձուածքներն առաւել ճշգրիտ նկարագրում են մարդուն իր գործունէութեան բոլոր ոլորտներում՝ արտայայտելով նրա զգացմունքները, մտքերը, գործողութիւններն ու յոյզերը: Մարմնարմատ բաղադրիչներով դարձուածաբանական միաւորների ամբողջական բները վկայում են արտալեզուական իրողութիւնների մասին, որոնք անհրաժեշտ են դարձուածաբանական միաւորների իյայտ գալու համար որպէս ամբողջութիւն: Դրանք մատնանշում են ընդհանրապէս լեզուի յատկութիւնը. այն է՝ պահպանել մշակութային եւ պատմական տեղեկատուութիւնը. ցոյց տալ, որ բացի հաղորդակցականից, այն ունի նաև կուտակային գործառոյթ, որ լաւագոյնս դրաւորուում է մարմնարմատ բաղադրիչներով ձեւաւորուած դարձուածքներով³:

Մարմնարմատ դարձուածքների բառաշերտը ցանկացած լեզուում պատկանում է լեզուի հնագոյն բառապաշարին, որ ենթագրում է՝ թէ շրջակայ աշխարհի ճանաչումը եւ մշակութայնացումը մարդն սկսել է ինքն իրենից: Այնուհետեւ ինքն իրեն ճանաչելով՝ մարդ արարածն անցել է շրջակայ աշխարհի նկարագրութեանը՝ իր մասին ունեցած դիտելիքներն ու պատկերացումները փոխանցելով շրջակայ իրականութեանը⁴:

Լեզուական քարտէսի բաղադրիչների ուսումնասիրութիւնը ժամանակակից լեզուաբանութեան հիմնախնդիրներից է՝ կապուած ազգային մշակոյթի աւանդոյթների առանձնայատկութիւնների հետ, որ թոյլ է տալիս վերականգնելու ժողովրդի մտածողութեան հնամենի համակարգը: Այս առումով լեզուի բառային կազմի մարմնարմատ դարձուածքների շերտը, որ ապրել է զարգացման

3 ЙОВИЧ, Э. Г., Соматизмы как часть фразеологической картины мира (на примере русского и сербского языков), Исследования молодых ученых: материалы XVII Междунар. науч. конф. (г. Казань, февраль 2021 г.). — Казань, Молодой ученый, 2021, 70-75. URL: <https://moluch.ru/conf/stud/archive/388/16330/>

4 ПЕТРОВА, Л. И., Человеческое тело и эмоции в контексте лингвокуль-турологии // Вестник ПГУ, Серия 3, 2007, 134.

երկարատեւ գործընթաց, հանդէս է գալիս որպէս մարդկային զգացումների, ապրումների, հասկացութիւնների եւ կերպարների ամբողջական համակարգի փոխանցման միջոց, որ արտացոլում է ժողովրդի նախնական աշխարհընկալման իրայատկութիւնները:

Լեզուական քարտէսի վրայ մարմնարմատ դարձուածքների կարեւորութիւնը շեշտում է մի քանի հանգամանքներով. մարդկային մտածողութեան մարդակենտրոն համակարգով, մարմնակազմութեան միակերպութեամբ (որ պայմանաւորուած չէ բնակլիմայական եւ տարածքային գործօններով), մարմնի մասերի բնութագրական բնազանցական յատկանիշներով եւ այլն⁵:

Ցանկացած ստեղծագործութեան (անհատական-հեղինակային թէ ժողովրդական-բանահիւսական) լեզուական ուսումնասիրութեան առանցքային հարցերից է նրա գեղարուեստական խօսոյթի հիմնական բաղադրիչների բացայայտումը, որի շրջանակներում անհրաժեշտ է մեկնաբանել նրա (խօսոյթի) գեղարուեստական գաղափարը եւ վերջինիս արտայայտման միջոցները: Գեղարուեստական գաղափարի դրսեւորման առումով կարեւորուում է լեզուի պատկերաւորման համակարգը, որի միջոցով կարելի է բացայայտել ստեղծագործութեան ոճական համակարգի բովանդակութիւնը: Այդ համակարգի իրացման եղանակներից են պատկերաւորման միջոցները, որոնց թուին են պատկանում դարձուածային միաւորները, համեմատութիւն-պատկերաւոր արտայայտութիւնները, մակդիրը, փոխարերութիւնը, չափազանցութիւնը, նուազասոյթը, առարկայացումը, անձնաւորումը, կրկնութիւնը, գեղչումը, դարձոյթը, շրջադասութիւնը, շրջասոյթը եւ այլն⁶:

Մարմնարմատ դարձուածքների գործածութիւնը պայմանաւորուած է նրանց ընդգծուած պատկերաւորութեամբ, փոխարերական իմաստների բեւեռացուած արտայայտութեամբ, քերականօրէն պարզ կազմութեամբ, ոճական բազմազանութեամբ եւ ազգային մտածելակերպի իրայատկութեամբ:

-
- 5 МАСАЛЕВА, Н. В., *Соматизмы в русской языковой картине мира*, Иваново 2010, АКД, 7.
- 6 Լեզուի պատկերաւորման միջոցների մասին տես ԵԶԵԿԵՍ.Ն, Լ., Հայոց լեզուի ոճագիտութիւն, Երեւան 2003: ԶԱՀՈՒԿԵՍ.Ն, Գ. Բ. - ԽԼՂԱԹԵՍ.Ն Ֆ. Հ., Հայոց լեզուի ոճարանութիւն, Երեւան 2007: ԽԱՀՍՏՐԵՍ.Ն, Լ. - ՄԻՐՈՒՄԵՍ.Ն, Մ., Հայերենագիտական տերմինների ուսումնական քառական, Երեւան 2020: ԳԻՒՐՁԻՆԵՍ.Ն, Դ., Հայոց լեզու խօսքարուեստի դասագիրք, Էջմիածին 2015:

Այս համատեքստում անհրաժեշտ է պարզել՝ ի՞նչ դեր ունեն մարմնարմատ դարձուածքները ժողովրդական աւանդազրոյցներում եւ բանահիւսական ստեղծագործութիւններում, գործառական եւ ոճական ի՞նչ արժէք ունեն դիւցազներգակ պատումներում։ Այդ առումով որոշակի հետաքրքրութիւն են դրսեւորում մարմնարմատ դարձուածքները «Սասունցի Դաւիթ» հայ ժողովրդական վիպերգում։ բանահիւսական պատումի շրջանակներում լաւագոյնս արտայայտում են մարմնարմատ դարձուածքների բաղդրիչների ժողովրդական մտածողութեան ինքատիպութեամբ պայմանաւորուած փոխաբերական նշանակութիւնները, ժողովրդական լեզուամտածողութեան հնամենի հետքերը, մարմնի մասերին վերագրած նախնական պատկերացումները եւ այլն։

Իւրաքանչիւր լեզուի մարմնարմատ դարձուածքների բառապաշարի համակողմանի ուսումնասիրութիւնը թոյլ կը տայ պարզելու այն հնամենի մտածողական դիտուածքներն ու կարծրատիպերը՝ կապուած մարդու մարմնի մասերի անուանումների հետ, որոնք իրենց արտացոլումն են գտել ժողովրդի լեզուական քարտէսում, որ անմիջականօրէն վերաբերում է «Լեզու-ազգ-մշակոյթ» գաղափարին եւ կենտրոնական տեղ է գրաւում ժամանակակից լեզուաբանական դիտութեան համակարգում⁷։

Այժմ փորձենք ներկայացնել մարմնարմատ դարձուածքների դրսեւորումները «Սասունցի Դաւիթ» վիպերգում եւ ցոյց տանք նրանց գործառական եւ ոճական իւրայատկութիւնները, որոնք բնորոշ են բանահիւսական ոճին, ժողովրդախօսակցական լեզուին⁸։

Իբրեւ դարձուածաբանական միաւորների բաղադրիչներ՝ վիպերգում հանդէս են գալիս հետեւեալ մարմնարմատները՝ գլուխ, աչք, ականջ, սիրտ, ոտք, ձեռք, քերան, երես, ծունկ, մէջք, արիւն, վիզ, նակատ եւ փոր։

Դիտարկենք այդ կառոյցները։

Գլուխ բաղադրիչը մարմնարմատ դարձուածքների արտայայտութեան հարթակում գործառական մեծ յաճախականութիւն ունի. այն բնութագրում է փոխաբերական հետեւեալ իմաստներով. 1. «իշխանութիւն», կենսական ներոյժ, մտֆերի եւ ուժի ծնունդի կենտրոն», 2. «ինելք, բանականութիւն», 3. «ուշք, ուշադրութիւն», 4. «մեծ

7 ՄԱՍԱԼԵՎԱ, Հ. Բ., անդ, 2-3.

8 Քննութեան բնագիր է ծառայել «Սասունցի Դաւիթ» հայկական ժողովրդական կազմի 1989ի հրատարակութիւնը («Արեւիկ», Երևան)։

խելքի տեր մարդ» եւ այլն: Այս բաղադրիչով կազմուած դարձուածքները հայերէնում հիմնականում արտայայտում են անձի՝ մտաւոր կարողութիւններով օժտուած լինել-չլինելու յատկանի:

Վիպերգում հանդիպում են հետեւեալ դարձուածքները.

Գիմին գլուխը կապել – «հարքեցնել, գիտակցութիւնը մթագնել».

«Էդպէս Բաղդասարին խարեցին, Եօթ տարուան քացախ գիմին գլուխ կապեցին» (117):

Գիմին գլուխը բռնել – «խիստ հարքել, գինովանալ, գիտակցութիւնը մշուշուել».

«Ել գիմին ենոր գլուխ չը բռնեց, չը քնաւ» (347):

Գիմին գլխից անցնել – «սթափուել, զգօնանալ».

«Դաւիթ, որ տեսաւ արենու շապիկ, Գիմին գլխից անցաւ, ասաց. - Տղա՛յ, Էդպայ ի՞նչ է, ի՞նչ է եներ» (285):

Գլխի ճարը գտնել – «փրկութեան հնար որոնել». Երբ որ Էկաւ՝ ձեզի մատադ կանի.

«Դուք ձեր գլխու ճարմ գտեք» (85):

Գլխին պատիժ բերել – «վերահաս փորձանի կանխագուշակում».

«Մերի՞կ, - ասաց, - ախր չորակո՞ղ են Էդ ազգ, Վախնամ՝ Դաւիթ պատիժ մի բերի մեր գլուխ» (218):

Գլուխ էդտեղ բրջես, էստեղ կընտես – «կայծակնային արագութեամբ տեղ հասնել».

«Քենի Թորոս, Քո գլուխ էդտեղ բրջես, էստեղ կընտես – Քանի որ Դաւիթ չեն վնասած, Բալքի պըրծցուս, տանես Սասուն» (233):

Գլխին տալ – «գլխին խփելով ողբալ՝ սգալ». Սայյեն ... Էլար, Էտու գլխուն».

«Իր էրեսներ արնեց» (268):

Զայնա՛մ էնոնց գլուխ – «չարիքի արժանի լինել. նզովի արտայայտութիւն».

«... Դաւիթ, Էդ տղաներ ինչի՞ խելիք: Ասաց. - Զայնա՛մ է նոնց գլուխ, Ինձ հետ կոռուան՝ ես Էլ զարկի» (242):

Գլխին մի բան հանել – «նեղութիւն պատճառել, դժուարին կացութեան մեջ գցել».

Գլուխը դուրս հանել չկարողանալ - «ամօթահար լինել».

«Մարէ՛,- ասաց՝ Մելիք,- Դաւիթ էղա քաներ հանեց իմ գլուխ, Որ ամօթու մէ՛շ էդ քաղքին չեմ կարնայ գլուխ հանի դուրս» (Յ01):

Քանի՞ գլուխ ունես - «համարձակութիւն՝ քաջութիւն ունենալ».

«Էն քանի՞ գլուխ ունի, Մտնի խաս բախչի մէջ, Զին քողնի հնտեղ արածի» (Յ59):

Աչք բաղադրիչը դարձուածքներում փոխաբերաբար արտայայտում է թէ՛ դրական (ուշազրութիւն, հաւատարմութիւն, բաւարարուածութիւն, զգօնութիւն, մաքրութիւն եւ այլն) եւ թէ՛ բացասական (ժլատութիւն, աչքածակութիւն, ժուժկալութիւն եւ այլն) իմաստներ: Աչքերի կարեւորութիւնն ընդգծուում է նրանով, որ մարդու աշխարհայեցքում ողջերի աշխարհը ըմբռնուում է որպէս լոյսի եւ տեսանելիութեան աշխարհ, իսկ մահացածների աշխարհը՝ որպէս խաւարի թագաւորութիւն: Այդ երկու աշխարհների յարաբերակցութիւնը (կապը) հնարաւոր է միայն աչքերի միջոցով, որոնք միաւորում (կապում) են մարդու ներաշխարհը եւ նրան շրջապատող տիեզերքը⁹:

Գլուխ եւ աչք մարմնարմատները ունեն ընդհանրական նշանակութիւններ, ինչպէս՝ գլուխ – 1. մտածողութեան եւ դատողութեան կենտրոն, 2. կեանք, 3. գերազանցութիւն եւ այլն: Աչք – 1. մարդկային զգացմունքների արտայայտման գլխաւոր միջոց, 2. մարդուն բնորոշ հոգեվիճակ՝ դրութիւն, 3. մահ, վախճան եւ այլն¹⁰:

Վկայութիւններ դիւցազնավէպի բնագրային օրինակից:

Աչքը հովանի լիմի – «մեկի բարօրութիւնը հայցել».

«Քո աչք հովանի մեզի վրայ ըլմի. Ետեւ անցման աստուածի իրարուց չամաչեցու» (Յ2):

Աչքը լոյս, աչք ի լոյս – «քարեմաղբութիւն՝ ուրախ լուր հաղորդելիս».

9 МАСАЛЕВА, Н. В., аնդ, 11.

10 ШАРМАНОВ, В. В., Соматизм как компонент фразеологической единицы русского и немецкого языков, Журнал Universum: филология и искусствоведение, «Языкознание и литературоведение» 2014, 7Universum.com.

«գնացին, ջուար տարան Խալիֆային, ասին, - Քո *աչքի ի լոյս*, տղեք էկան (110): Էկէ՛ք, ձեր *աչքը լոյս*, Էկէ՛ք, մեր *աչքը լոյս*, Մեր Դաւիթն է էկէ» (240):

Աչքերը խփել-բացել – «մի բան կայծակնային արագութեամբ կատարել».

«Ելաւ, ինքն իր ձին բաշեց դուրս, Հեծաւ, *աչք խփեց էրաց*, հասցուց մօր մօտ» (118):

Աչքիմ գալ – «մեկի դուրը գալ, հաւանել».

«Են տղան էնքան հալուորի *աչքիմ չէր գայ*, Որ ասաց. Զէ՛, կարիք մարդ չկայ» (140):

Աչքեր բոռնալ – «դժգոհութեան արտայայտութիւն՝ անակնկալ դէպի առթիւ».

«– Մարէ, քո *աչքեր բոռնալ*, ինչի՞ շուտ չասիր» (229):

Մէկի վրայ աչք դնել – «սիրահետել, դուր գալ».

«Զենով Հովանի կնիկ Սառյեն – Դաւիթ շատ սիրուն, խորո՞ւ տղայ էր - Գաղտուկ աչք էդի վեր Դաւթին» (268):

Աչքերը դառնալ – «տեսածից սաստիկ զայրանալ՝ բորբոքել».

«Դաւիթ որ էդ տեսաւ՝ Դաւթի աչքեր դարձան» (260):

Աչքը խարուել – «մոլորեցնել, շեղել».

«Մեկը վերուց, ասաց.- Զէ՛, դու իմ *աչք խարիր*. Դու կայնար իմ առաջ, Որ աչքեցի քո երես, իմ մատ դիպաւ մատնիքին» (404):

Սիրտ բաղադրիչով դարձուածքներում արտայայտուած են բառի փոխաբերական իմաստները՝ մարդու հոգեկան աշխարհը (զգացմունեները, տրամադրութիւնը, ապրումները), խառնուածքի տը (գաղտնականութիւնը, խիզախութիւնը, վախկոտութիւն) եւ այլն: Դարձուածքներում սիրտ բաղադրիչն ըմբռնւում է որպէս կենսական ուժի աղբեւը, կենսագործունէութեան սկզբնապատճառ:

Վիպերգում հանդիպում են հետեւեալ դարձուածքները.

Սրտի պապակն անցմել – «ծարաւը յագեցնել. հանգստանալ».

«Ա՛յս, երանի՝ մէկ կաթ ջուր ըլներ, Ես խմէի, սրտիս պապակն անցմել» (72):

Սիրուր բացել – «գաղտնիքները կարդալ՝ իմանալ».

«Զենով Յովան ասաց. - Դու վե՛ր էլի, իմ սիրու բաց, տես» (237):

Սիրուր բացել, Սրտմերը բացուել – «ուրախանալ, զուարհանալ».

«Ճետ տղեկներուն էրթանք գետափ, Որ քիչ մի սրտմերս բացուի» (287):

Սիրուր հովանալ – «հանգստանալ, զայրոյթն անցնել».

«Կուժ մը էլ էնոր արմեն քերէֆ՝ Խմեմ՝ սիրու հովնա» (230):
Մըսրայ Մելիք ասաց. - Արուն քերէֆ, որ ես խմեմ, իմ սիրու հովնա» (237):

Սիրուր ցաւել – «մեկի մասին հոգ տանել, կարեկցել, մտահոգուել».

«Զենով Յովան ասաց. - Սառյէ, Օտար զարմից ես դու, քո սիրու հեզ չի ցաւի» (238):

Սիրուր պմդանալ – «յուսադրուել, գօտեպնդուել».

«Դաւթի սիրու պմդացաւ էդ խօսքերով, Դաւթի քշեց, գնաց» (322):

Սրտի քօգեր սրբել – «մտահոգութիւններն ու կասկածները ցրել».

«Էրթամ գինի խմեմ, գամ հաց ուտեմ, Որ իմ սրտի քօգեր սրբուի» (360):

Սիրուր վառուել – «սաստիկ վշտանալ, յուզուել, անմեկին ցաւ ապել».

«Խանդութ գիտցաւ, որ Դաւթի սպաներ են, Կակծուց իր սիրու վառուաւ» (373):

Սիրուր ելմել – «յուզուել, բարկանալ, սաստիկ զայրոյթ ապրել».

«Եստեղ Դաւթի սիրու էլաւ, ասաց» (382):

Գլուխ, աչք, սիրտ, մարմնարմատները դիտարկել են աշխարհի առարկայացման քարտէսում¹¹: Այս խնդրի արդիականութիւնը պայմանաւորուած է նրանով, որ աշխարհի պատկերի առարկայական համեմատական վերլուծութիւնը, որ կատարւում է մարմնարմատ բառապաշարի եւ մարմնարմատ դարձուածքների միջոցով՝

¹¹ МАГОМЕДОВА, С. И., *Соматизмы «глаз», «сердце», «голова» в объективации картины мира (на материале аварского и арабского языков)*, АКД, Махачкала 2009.

ծագումնաբանօրէն եւ տիպաբանօրէն տարբեր լեզուների միջեւ, հնարաւորութիւն է տալիս պարզելու, թէ ի՞նչպէս է մտածողութիւնը օդտագործում մարմնարմատները աշխարհի առարկայական պատկերը բառայնօրէն արտայայտելու համար, բացայայտում է առարկայական իրականութեան ծածկագրման ուղիների նմանութիւններն ու տարբերութիւնները, վեր է հանում ազգային լեզուամտածողութեան առանձնայատկութիւնները աշխարհի լեզուական քարտէսում:

Ականջ բաղադրիչով դարձուածքներն արտայայտում են տարբեր յատկանիշներ՝ լսելիութիւն, ուշադրութիւն, խոնարհութիւն, անուշադրութիւն, անգաղտնապահութիւն եւ այլն:

Ականջի կարեւորութիւնն ընդգծում է նրանով, որ այն արտաքին աշխահի ձայնային պատկերի ընկալման գործիք է, որ մարդուն մղում է համապատասխան անդրադարձների:

Վիպերգում գործածուած են ականջ բաղադրիչով հետեւեալ դարձուածքները.

Զեմմ ականջն ընկնել – «լսելի լինել՝ դառնալ».

«Բոռաց ասաց.- Շու'տ արէք: Զեմմ ընկաւ Սանասարի ականջ» (80):

Ականջ ամել – «լսել, խորհուրդն ընդունել».

«Դաւիթ մէկ նապաստակ կը տեսներ՝ կը գարկէր, կը սպանէր, Ականջ չէր ամի փակիւաններուն (235): Դաւիթ ... էնոնք գազաններ են, թո՞յ, թո՞ն գնան: Դաւիթ ականջ չարեց, գնաց (248): Քանի Դաւիթ չէր գնացէ կոփու, Որք տղայ էր, պահող, ականջ արող չկար» (344):

Զոց պատառն ականջը թողնել – «ապանել, բնաջնել, վերացնել».

«Փակիւաններ կգան, էնոր զոց պատառ ականջ կթողնեն» (359):

Ոտք բառով դարձուածքներն արտայայտում են ժողովրդի նախնական պատկերացումները կենսական ներոյժի գործունէութեան փոփոխական վիճակների վերաբերեալ¹², հմմտ. ոտքերի վրայ կանգնել – «ամրանալ, կեանքով լցուել» եւ ոտքերը տնկել – «վախնանուել, այն աշխարհը գնալ»:

Վիպերգում հանդիպում են ոտք բաղադրիչով հետեւեալ դարձուածքները.

Ոտքերը գետմից կտրուել – «սաստիկ ուրախանալ, ցնծալ».

«Ուրախութեան էնոր ոտքեր գետմէն կտրաւ» (264):

Ոտքը քարին դիպչել – «դժբախտութեան հանդիպել, անախործ վիճակի մէջ ընկնել».

«Որտեղ որ դու էրթաս՝ Քո ոտք քարին չը դիպչի» (356):

Զեռք բառով բաղադրուած կապակցութիւններն արտայայտում են դրական ու բացասական իմաստներ.

ա) ուժ, առատաձեռնութիւն, ազմուութիւն, հիւրընկալութիւն.

Զեռքից գալ – «մի գործի մէջ հմուտ՝ յաջողակ լինել».

«Որ դու չերթաս, Էն աղջիկ քերես... Տասեն, Էնոնց ձեռեն չեկաւ» (132):

Մէկի ձեռքի հետ գնալ – «ենթարկուել մէկի կամֆին».

«Զենով Հովանի կնիկ Սաոյեն, Գաղտուկ աչք եղի վեր Դաւթին, ասաց. - Տի գաս հետ իմ ձեռաց» (268):

Ամէն ինչ մէկի ձեռքին լինել – «իշխանութիւն՝ զօրութիւն՝ ուժ ունենալ».

«Իրեք կողմն աշխարհի Մըսրայ Մելիքի ձեռն էր» (303):

Զեռքին ջուր լցմել – «ծառայել, հարսնութիւն անել».

«Նոր տի քո ձեռքին ջուր լըցմենք, մեր աղբեր Դաւիթ» (316):

բ) ժշատութիւն, աղժատութիւն, դժգոհութիւն, անկարողութիւն. «Մի գործի ձեռք գցել (քալել) – դժուարին գործ ձեռնարկել». Ասաց. Ես ի՞նչ եմ, Որ էդ քաներին ձեռ քալեմ (139):

Զեռքդ կոտրուի – «դժգոհութեան արտայայտութիւն՝ անակնեկալ դէպֆի առթիւ».

«Զեռիկ, դու կոտոր կենայիր, Որ ուժ էնքան չկար քեզի» (320):

Բերան բաղադրիչով կապակցութիւնների արտայայտած իմաստները հիմնականում կապուած են անձի գաղնապահ լինել-չլինելու, շատախօս կամ քչախօս լինելու յատկանիշների հետ:

Վիպերգում հանդիպում են քերան բաղադրիչով հետեւեալ դարձուածքները.

Խօսքը քերանից գնալ – «անզգոյ՝ ակամայ միտք արտայայտել».

«ասաց.- Որդիք, խօսք է, քերանէս գնացեր է, Զեզի պիտի դուրս հանեմ» (97).

Քերան կոտրուի – «կշտամբանի արտայայտութիւն՝ ուղղուած չար խօսք ասողին».

«Հրողքեր ասաց. -Սովորեցնողիդ քերան կոտրի» (270):

Քերանը ցրուել – «վայրիվերոյ խօսել, գոեհկութիւններ դուրս տալ».

«Դարձաւ ասաց.- Քերանդ շատ մի ցրուի, Քէնէ աւել է» (374):

Երես բաղադրիչով դարձուածքները հիմնականում արտայայտում են բացասական իմաստներ, ինչպէս՝ յանդգնութիւն, յամառութիւն, կշտամբանի, վիրաւորանի եւ այլն:

Վիպերգում հանդիպում են երես բաղադրիչով հետեւեալ դարձուածքները.

Երեսով տալ – «կշտամբել, չարախօսել».

«Դուք ինձ էրեսով կը տայի՛, Տեսա՞ն իմ կոքերի զօրութիւն» (110):

Երեսին մուր ժնել – «անուանարկել, պատիւն արատաւորող լուրեր տարածել».

«- Զանը՝ էսայ ի՞նչ մուր էր՝ ժըսեցիմք մեր էրես» (248):

Երեսին քռնել – «վիրաւորել, վերեւից նայել, արհամարհել».

«Իմ դուռ-դրկիցներ, ճեր էրես շատ եմ քռեր, Ինձ հալալ արէֆ» (317):

Ծունկ//ծունք բաղադրիչներով դարձուածքներն արտայայտում են խոնարհութիւն, երկրպագութիւն, վախի զգացում եւ այլ կարգի իմաստներ:

Ծունք դնել – «խոնարհուել, երկրպագել».

«Իրեմ անգամ ծունք էդի առաջի աստծու» (139):

Մէջք բաղադրիչը դարձուածքներում արտայայտում է անպարտելի ուժի կենտրոն իմաստ: Վիպերգում հանդիպում է՝

Մէջքը գետին դնել – «յաղթել, պարտութեան մատնել».

«Դու դրեցիր իմ մէջք գետին, էտուց ետք՝ ես ժէ կնիկ» (376):

Արիւն բաղադրիչով դարձուածքներն վիպերգում արտայայտում են համակրանք, սպանութիւն, վրէժխնդութիւն, սաստիկ զայրոյթ եւ այլ իմաստներ:

Արիւնը մէկի վրայ եռալ – «համակրել, մէկի նկատմամբ համակարանք՝ սէր տածել».

«Էդ տղան էնենց ջահել, ջիւան տղայ է, էնոնց արուն եռաց էնոր վերայ» (141):

Արիւնը լցուել աչքերը // արիւնը ելնել աչքերը – «սաստիկ զայրանալ՝ բարկանալ».

«Բարկութենեն արուն լցուաւ Դաւթի աչքեր» (294):

Ես որ լսեց Մըսրայ Մելիք, կատու ... Արուն էլաւ աչքեր» (300):

Արնի գետեր անցնել – «մեծ փորձանեներ յաղթահարել».

«Ես կսէի՝ դու ինձ արնի գետե՛ր տանցուցես» (319):

Վիզ բաղադրիչով դարձուածքներ են կազմում մարդու քոյլ տեղը, խնդրանք, խոնարհում իմաստներով:

Մեղքը մէկի վիզը ճգել – «մէկին մեղքի տակ գցել».

«Որ իմ հէրն իմանար, էսքան մեղք ու արունք չէր ճգի իմ վիզ, ինձ կը տար» (67):

Մեղքն ուրիշի վիզը գցել – «պատասխանատուութիւնից խուսափել. ուրիշին մեղաւոր համարել».

«Խանդութ Դաւթին ասաց. Իմ մեղք մի քայի քո վիզ, դարձի էրթանք» (364):

Վիզ ծոել – «մէկի առաջ խոնարհուել, խեղնանալ».

«Էսպէս, վիզ ծոելով, մէկ մէկ կոզբաղնի կողմ աչքեց» (296):

Ճակատ բաղադրիչը դարձուածքներում արտայայտում է զգայութեան կննտրոն իմաստ. վիպերգում հանդիպում է գինին

նակատ բռնել դարձուածքը՝ «սաստիկ հարքել, զգօնութիւնը կորցնել» իմաստներով:

«Եօր տարուայ գինին ... Մհեր որ խմեց՝ Մհերի նակատ բռնեց» (197):

Փոք բաղադրիչը դարձուածքներում պահպանում է հնամենի մտածողութեան կարծրատիպը, որու համաձայն՝ փոք մարմնարմատը դիտուել է իբրեւ «կեանքի տեղակայման վայր՝ հանգրուան»։ Համաձայն հնամենի պատկերացումների՝ մարդու կենսական ողջ գործարանները (ինչպէս նաեւ նրա առանձին մասերի) գործառոյթները հնարաւոր է միայն ինչ-որ կենսական ուժի ազդեցութեան չնորհիւ, որով լցուած է ողջ տիեզերքը։ Հէնց այդ կենսական ոյժը՝ կեանքի «ուղեկցող» եւ մարդուն շրջակայ միջավայրի հետ կապող ոյժն է։ Մարդու կազմուածքում այդ ուժը կենտրոնացած է յատկապէս փորում, որ ծառայում է որպէս կեանքի յենակէտ՝ մարդուն պահելով ուղղահայեաց դիրքով¹³։ Կենսական ներոյժը ունակ է շարժուելու մարդու մարմնով մէկ։ Նրա ելակէտային շարժումը կապւում է ուժի, գարգացման, ծաղկման իմաստների հետ, եւ որու դադարը անկումն է, ուժի սպառումը, որ խորհրդանշում է հիւանդութիւն, անկում, մահ։

Վիպերգում հանդիպում է փորում հունար լինել դարձուածքը՝ «շնորհաշատ՝ շնորհներով լեցուն լինել» իմաստներով։

«Որ էդայ հունար քո փոր կայ, Քանի կենդանի ես՝ ես քո ծառան տըլնիմ» (238):

Վիպերգում մարմնարմատ դարձուածքների գործառական արժէքը պէտք է դիտարկել նաեւ նրանց ձեւակազմական կաղպարների եւ ոճական արժէքի տեսանկիւնից։

Վիպերգում մարմնարմատ դարձուածքները հանդէս են գալիս տարատեսակ կաղապարներով։ այդ կարգի կապակցութիւնները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով՝ ըստ ձեւաբանական արժէքի, ըստ կառուցատիպերի, ըստ անուանողական եւ հական դորդակցական արժէքների, ըստ տարբերակների եւ այլն։

Ա. Հստ ձեւաբանական արժէքի՝ մարմնարմատ դարձուածքները հիմնականում ունեն բայ խօսքի մասի արժէք։ Հազուաղէպ հանդիպում են դարձուածքներ գոյականի (աչքը լոյս, աչք ի լոյս) եւ ձայնարկութեան արժէքով (զայնա՛մ էնոնց գլուխ)։

Յետայսու բոլոր կարգի դասակարգումները կատարւում են բայական մարմնարմատ դարձուածքների շրջանակներում։

Բ. Բայական մարմնարմատ դարձուածքների կառուցատիպերը վիպերգում հիմնականում ունեն անուանողական արժէք եւ հանդէս են դալիս երկանդամ, եռանդամ, քառանդամ, բազմանդամ կաղապարներով։

ա) Երկանդամ կառոյցներ

զլիսի՞ն տալ – «զլիսին խփելով ողբալ՝ սգալ»¹⁴

աչքի՞ն գալ – «մէկի դուրը գալ, հաւանել»

աչքերը քոռնալ – «դժգոհութեան արտայայտութիւն՝ անակնկալ դէպի առքիւ»

աչքերը դառնալ – «տեսածից սաստիկ զայրանալ՝ բորբոքուել»

աչքը խարուել – «մոլորեցնել, շեղել»

սիրտը ցաւել – «մէկի մասին հոգ տանել, կարեկցել, մտահոգուել»

սիրտը պմդանալ – «յուսադրուել, գօտեպնդուել»

սիրտը հովանալ – «հանգստանալ, զայրոյթն անցնել»

սիրտը վառուել – «սաստիկ վշտանալ, յուզուել, անմեկին ցաւ ապել»

սիրտը ելմել – «յուզուել, բարկանալ, սաստիկ զայրոյթ ապրել»

ականջ ամել – «լսել, խորհուրդն ընդունել»

բերանը կոտրուել – «կշտամբանքի արտայայտութիւն՝ ուղղուած չար խօսք ասողին»

բերանը ցրուել – «վայրիկերոյ խօսել, գոեհկութիւններ դուրս տալ»

երեսի՞ն քոմել – «վիրաւորել, վերեւից նայել, արհամարհել»

ծուեր դմել – «խոնարիուել, երկրպագել»

14 Բայական յարադրութիւնները (զլիսի՞ն տալ, սիրտը քացուել եւ այլն) ձեւակազմական առումով դիտում ենք իրբեւ երկրադրիչ կառոյցներ։

ձեռքից գալ - «մի գործի մեջ հմուտ՝ յաջողակ լինել»
վիզ ծոել - «մէկի առաջ խոնարհուել, խեղճանալ» եւ այլն:

բ) Եռանդամ կառոյցներ

արթի գետեր անցնել - «մեծ փորձանեցներ յաղթահարել»
զինին գլխին կապել - «հարքեցնել, գիտակցութիւնը մքագնել»
զինին գլխից անցնել - «սրափուել, զգօնանալ»

գլխի թարը գտնել - «փրկութեան հնար որոնել»

գլխին պատիժ բերել - «վերահաս փորձանի կանխագուշակում»

երեսին մուր ժնել - «անուանարկել, պատիւն արատաւորող լուրեր տարածել»

խօսքը բերանից գնալ - «անզգոյշ՝ ակամայ միտք արտայայտել»
մէջքը գետին դնել - «յաղթել, պարտութեան մատնել»

ժամի^o գլուխ ունես - «համարձակութիւն՝ բաջութիւն ունենալ»
աէնն ականջն ընկնել - «լսելի լինել՝ դառնալ»

փորում հունար լինել - «շնորհաշատ՝ շնորհներով լեցուն լինել»

գ) Քառանդամ եւ բազմանդամ կառոյցներ

արիւնը մէկի վրայ եռալ - «համակրել, մէկի նկատմամբ համակարանք՝ տածել»

գլխին մի բան համել - «նեղութիւն պատճառել, դժուարին կացութեան մեջ գցել»

գլուխը դուրս համել չկարողանալ - «ամօթահար լինել»

մէկի վրայ աչք դնել - «սիրահետել, դուր գալ»

ջոջ պատառն ականջը թողնել - «սպանել, բնաշնչել, վերացնել»
մէկի ձեռքի հետ գնալ - «ներարկուել մէկի կամքին»

մի գործի ձեռք գցել // թալել - «դժուարին գործ ձեռնարկել»

ամէն ինչ մէկի ձեռքին լինել - «իշխանութիւն՝ զօրութիւն՝ ուժ ունենալ»

Գ. Հաղորդակցական կառոյցներն վիպերգում հազուաղէպ գործածութիւն ունեն. դրանք ներկայանում են պարզ կամ բարդ նախադասութեան կառուցատիպերով, ինչպէս՝
ժամի^o գլուխ ունես - «համարձակութիւն՝ բաջութիւն ունենալ»

Աչքը հովանի լինի – «մեկի բարօրութիւնը հայցել»
 Բերանը կոտրուի – «կշտամբանի արտայայտութիւն՝ ուղղուած
 չար խօսք ասողին»
 Զեռքդ կոտրուի – «դժգոհութեան արտայայտութիւն՝ անակնեալ
 դեպքի առքիւ»
 Գլուխ էդտեղ քրջես, էստեղ կընտես – «կայծակնային արագու-
 թեամբ տեղ հասնել»

Դ. Ըստ տարբերակների տիպեր՝ վիպերգում հանդիպում են
 բառային (հոմանշային), քերականական (ձեւաբանական ու շարա-
 հիւսական) եւ ծաւալային մարմնարմատ դարձուածքներ¹⁵, որոնց
 քննութիւնը, համապատասխան կառուցատիպերով, կարող է ամ-
 բողջացնել դիւցագներգական պատումի համատիպ կառուցների
 նկարագրութիւնը:

ա) Բառային տարբերակներն այնպիսի կապակցութիւնների
 զոյգեր են, որոնք միմեանցից տարբերում են հոմանշային որեւէ
 բաղադրիչով. նման կապակցութիւններն ունեն իմաստային որո-
 շակի մերձաւորութիւն: Ինչպէս՝

Մեղքն ուրիշի վիզը գցել // մեղքը մէկի վիզը ճգել – «մեկին
 մեղքի տակ գցել. ուրիշին մեղաւոր համարել». ուրիշ // մէկը, գցել
 // ճգել:

Գիճին գլուխը բռնել // գիճին ճակատ բռնել – «սաստիկ հար-
 բել, զգօնութիւնը կորցնել. գիտակցութիւնը մշուշուել». գլուխ // ճա-
 կատ:

Արիւնը լցուել աչքերը // արիւնը ելնել աչքերը – «սաստիկ
 զայրանալ՝ բարկանալ». լցուել // ելնել

բ) Գերականական տարբերակներն առաջանում են կառուցնե-
 րի բաղադրիչների ձեւաբանական կամ շարահիւսական յատկանիշ-
 ների հիման վրայ: Կարելի է առանձնացնել ձեւաբանական տար-
 բերակների հետեւեալ տեսակները:

Հանդիպում են տարբերակներ, որոնց բայական բաղադրիչ-
 ները ցուցաբերում են ներգործական-չէզոք սեռային հակադրու-
 թիւն, ինչպէս՝

¹⁵ Հայերէն դարձուածային միաւորների տարբերակների մասին տե՛ս ԲԵ-
 ԴԻՐԵՍՆ, Պ., Յշ. աշխ., 213-216:

Սիրտը բացել // սրտները բացուել – «գաղտնիքները կարդալ՝ իմանալ. ուրախանալ, զուարհանալ». բացել // բացուել

Դիտարկուած տարբերակում առկայ է նաեւ միեւնոյն դարձուածքի եզակի յոդնակի հակադրութիւն՝ սիրտը // սրտները:

գ) Շարահիւսական տարբերակները հանդէս են գալիս անուանական եւ հաղորդակցական կառոյցներով՝ դարձուածքների նախադաս շարադասութեամբ: Հմմտ.

Աչքը լոյս, աչք ի լոյս – «քարեմաղթութիւն» ուրախ լուր հաղորդելիս». աչիկ, դու լուսով ըլնես

Աչքդի խաւարեր – «զղանքի՝ ափսոսանքի արտահայտութիւն». աչիկ, դու խաւար կենայիր

Զեռքդի կոտրուէր – «դժգոհութեան արտահայտութիւն» անակնկալ դէպքի առթիւ». ձեռիկ, դու կոտոր կենայիր

դ) Շաւալային տարբերակները հանդէս են գալիս բաղադրիչների քանակային կազմի փոփոխութիւններով. դրանց (տարբերակների) եզրերը հանդէս են գալիս համառօտ եւ ծաւալուն կառոյցներով: Այդ կարգի տարբերակները ձեւաւորւում են բառերով, ինչպէս՝

Բերանդ մի ցրուի եւ բերանդ շատ մի ցրուի – «շատ մի՝ խօսիր. բերանդ փակ պահիր»

Էրես թռնել եւ էրես շատ թռնել – «նեղութիւն պատճառել»

Մարմնարմատ դարձուածքների տարբերակային ձեւերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այդ կարգի կառոյցները պահպանում են հայերէնի բառագիտական մակարդակի օրինաչափութիւնները, որոնք կանոնաւոր կերպով գործում են ինչպէս բառակազմական, այնպէս էլ դարձուածաբանական մակարդակներում:

Վիպերգում՝ մարմնարմատ դարձուածքներն ունեն որոշակի ոճական արժէք, որի բացայայտումը կարող է վեր հանել վիպերգում գործածուած կայուն կապակցութիւնների ինքնատիպութիւնը. կապակցութիւններ, որոնք ծառայում են բանահիւսական պանը. կապակցութիւններ, որոնք ծառայում են բանահիւսական պահանական հաղորդելով սաստկացում, աստիճանաւորում, չափազնցութիւն, նուազարերութիւն (նուազասոյթ), անշունչ առարկաներն ցութիւն, նուազարերութիւն (նուազասոյթ), անշունչ առարկաներն անձնաւորելով եւ այլն: Մարմնարմատ դարձուածքներն այդ դերեանձնաւորելով եւ գանազան միջոցներով, ինչպիսիք են՝ բացքողումը կատարում են գանազան միջոցներով,

(Էլլիպսիս), կրկնութիւն, կամընտրական անդամի առկայութիւն, շրջուն շարադասութիւն եւ այլն:

Դիտարկենք մարմնարմատ դարձուածքների ոճական արժէքը համապատասխան շարահիւսական միջավայրում:

Վիպերգում մարմնարմատ դարձուածքները շարահիւսական որոշակի միջավայրում արտայայտում են դարձուածային իմաստի սաստկացում: Այն դրսեւորւում է տարբեր դարձուածքների «միաւորման» հետեւանքով, միաձոյլ՝ մէկ կառոյցով: Այդօրինակ «միաւորումը» ընդունուած է անուանել բացբողում (Էլլիպսիս), որի դէպում շարահիւսօրէն նոյն պաշտօնը կատարող որոշ անդամներ դուրս են գալիս դարձուածքի կազմից:

Գլխիդ մեռնեմ // արեւիդ մեռնեմ դարձուածքների միաձու-լումից վիպերգում հանդիպում է գլխիդ՝ արեւիդ մեռնեմ կապակցութիւնը՝ բայական անդամի գեղչման հետեւանքով: դարձուածքը նշանակում է «զոհաբերուելու պատրաստակամութիւն. սիրոյ՝ փա-դաքշանի արտայայտութիւն»:

«Քեռին ուկին տեսաւ՝ - վա՛յ, Դաւիթ շան,- ասաց.- Քո գլխուն, արեւուն մեռնեմ» (263):

Գլխիս վրայ եկար // երեսիս վրայ եկար > գլխիս՝ երեսիս վրայ եկար. «քարեմաղթութիւն՝ ցանկալի հիւրի գալու առթիւ. սիրով, յօ-ժարութեամբ հանոյքով».

«Գլխուս, երեսիս վերան էկար, ի՛մ տէր» (151):

Արիւնը լցուել աչքերը // արիւնը ելնել աչքերը > արիւնը լցուել՝ ելնել աչքերը – «սաստիկ զայրանալ՝ բարկանալ»:

Վիպերգում իմաստի սաստկացումը դերսեւորւում է նաեւ սատիճանալորման միջոցով: դարձուածքի իմաստի սաստկացումն ապահուում է նոյնիմաստ երկրորդ կառոյցը, ինչպէս՝ գլուխ բարը եւ էրես պատ. «ինչ ուզում է՝ քող հետը պատահի. չեզոք արտայայտութիւն». «Թէ չը հաւեաւ՝ գլուխ բար, էրես պատ» (348):

Վիպերգում տարածուած իրողութիւն է կրկնութիւնը. միեւնոյն մարմնարմատ դարձուածքներնի կրկնութեամբ շեշտուում է դարձուածքի իմաստը՝ պատումին հաղորդելով յուզականութիւն¹⁶: Ուշագրաւ է հետեւեալ դարձուածքների կիրառական-ունական արժէքը.

16 Հայերէնի ոճական համակարգի պատկերաւորման եւ արտայայտչութեան միջոցների մասին տե՛ս Գիլբրջինեսն, Դ., Հայոց լեզու. խոսժարուեստի դասագիրք, Ս. Էջմիածին 2015:

«Գնացին, զուղար տարան Խալիֆային, ասին,- Քո *աչք* ի լոյս, տղէք Էկան» (110):

«Էկէ՛ք, ձեր *աչքը* լո՛յս, Էկէ՛ք, մեր *աչքը* լո՛յս, Մեր Դաւի՛քն է Էկէ» (240):

Վիպերգի ոճական համակարգին բնորոշ է չափազանցութիւնը, որ ժողովրդական լեզուամտածողութեան դրսեւորում է. բանահիւսական պատումներում չափազանցութիւնը ընդունուած ոճական հնարք է՝ կերպարներին, իրողութիւններն ու նրանց յատկանիշները խեղկատակ չափերով ներկայացնելու համար նպատակ ունենալով ունկնդրի վրայ ազդեցութիւն գործել: Այդ դերը կատարում են նաեւ մարմնարմատ դարձուածքները, որոնք, ինչպէս նշեցինք, վիպերգում միտումնաւոր կերպով մեծացուած ու ահռելի չափերով են ներկայացնում առարկան, երեւոյթը կամ նրանց յատկանիշները: Վիպերգում չափազանցութիւնը վերաբերում է գործողութեան յատկանիշին (գործողութիւն կատարելու կայծակնային արագութեանը):

Աչքերը խիել-բացել – «մի քան կայծակնային արագութեամբ կատարել».

«Էլաւ, ինքն իր ձին քաշեց դուրս, Հեծաւ, *աչք* խիեց էրաց, հասցուց մօր մօտ» (118):

Գլուխ էդտեղ թրջես, էստեղ կընտես – «կայծակնային արագութեամբ տեղ հասնել».

«Քեռի Թորոս, Քո գլուխ էդտեղ թրջես, էստեղ կընտես» (233):

Չափազանցութեան հակառակ դրսեւորումն է նուազասոյթը. ոճական այս հնարի միջոցով միտումնաւոր կերպով փոքրացւում, նուազեցւում են առարկայի ծաւալային, տարածական ու կշռային չափերը, կամ թուլացւում եւ նուազագոյնի են հասցւում գործողութեան կատարման հանգամանքները եւ այլն:

Զոշ պատառն ականջը թողմել – «սպանել, բնաշնչել, վերացնել».

«Փահլեւաններ կը գան, ինոր զոշ պատառ ականջ կը թողմեն» (359):

Վիպերգում հանդիպում են մարմնարմատ դարձուածքներ, որոնց կազմում կան կամընտրական անդամներ. վերջիններս սաստկացնում են խօսողի դատողական վերաբերմունքը՝ սահմանափակելով դարձուածքի իմաստային ծաւալը:

(Քո) սիրով չի ցաւի եւ (Քո) սիրով հեզ չի ցաւի.

«Ձենով Յովան ասաց. - Սաոյե՛, օտար զարմից ես դու, Քո սիրու հեզ չի ցաւի» (238):

Բերանդ մի ցրուի եւ բերանդ շատ մի ցրուի - «շատ մի՛ խօսիր. բերանդ փակ պահիր»:

«Դարձաւ ասաց.- Բերանդ շատ մի ցրուի, Քենէ աւել է (374):

Էրես քոնել - էրես շատ քոնել - «նեղութիւն պատճառել»:

«Իմ դուռ-դրկիցներ, ձեր էրես շատ եմ քոներ, Ինձ հալալ արէֆ» (317):

Վիպերգում կան մարմնարմատ կառոյցներ, որոնք հանդէս են եկել ուղիղ եւ փոխաբերական նշանակութիւններով: Ուղիղ իմաստով՝ դրանք ազատ կապակցութիւններ են, փոխաբերական իմաստով՝ դարձուածքներ. տուեալ դէպքում ուղիղ եւ կայուն կապակցութիւնները համապատասխան իմաստներով կազմում են համառունական գոյգ, ինչպէս՝ ոտքերը գետնից կտր(ու)ել - գետնից վեր բարձրանալ եւ ոտքերը գետնից կտրուել - «սաստիկ ուրախանալ, ցնծալ»:

«Պինդ քափ էտու, էնոր ոտքեր գետնից կտրեց» (ազատ կապակցութիւն) (312):

«Ուրախութենեն էնոր ոտներ գետնեն կտրաւ» (264):

Վիպերգում հանդիպում են մարմնարմատ դարձուածքներ, որոնք գրաբարում ազատ կապակցութիւններ են եղել. դրանց բաղադրիչների առարկայական իմաստի յետագայ վերացարկումն ու փոխաբերական գործառոյթը տարժամանակեայ գործընթաց է, ինչպէս՝ ձեռքերին ջուր լցնել (ուղիղ իմաստով) եւ ձեռքերին ջուր լցնել՝ «ծառայութիւն մատուցել, հարսնութիւն անել» իմաստներով, ինչպէս եղիշէ Պատմիչի մօտ գտնում ենք. «Ոչ ոք ումեթ ջուր ի ինչպէս արկաներ եւ ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանեին»: ձեռս արկաներ եւ ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանեին»:

«Նոր տի քո ձեռքին ջուր լրցնեմի, մեր աղքե՛ր Դաւիթ» (316):

Վիպերգում գործածուած որոշ մարմնարմատ դարձուածքներ գրաբարի համապատասխան փոխաբերական կառոյցների բարբառային դրսեւորումներն են՝ իմաստային մասնակի փոփոխութեամբ, ինչպէս. «ձեռն ի գործ արկանել» - «ձեռք զարնել, ձեռթեամբ, ինչպէս. «Այն ինչ լինելը նոցա զանաշատ զանողորմ ձեռն նարկել, սկսել»: «Այն ինչ լինելը նոցա զանաշատ զանողորմ ձեռն պատերազմի ի գործ արկանել» (ԲՄԿ Ժ.29):

մի գործի ձեռք թալել – «դժուարին գործ ձեռնարկել»:

«Ասաց.- Ես ի՞նչ եմ, Որ էդ բաներին ձեռ թալեմ» (139):

Եւ կամ գրաբարի մէջ՝ ի ձեռն առնուլ – «իք ձեռն առնել, բռնել, տիրանալ». Զի դարձաւ տէրութիւն իմ յիս, եւ նատայ ես յաքոն հարց իմոց, ի ձեռն առի զիշխանութիւն իմ... եւ նուանեցի անդրէն զաշխարն իմ (ԱՄԿ Ժ, 52):

(մի բան) մէկի ձեռքին լինել – «իշխանութիւն՝ զօրութիւն՝ ուժ ունենալով՝ տիրանալ»:

«Իրէք կողմն աշխարհի Մըսրայ Մելիքի ձեռն էր» (303):

Վիպերգում յաճախ դարձուածքի մարմնարմատ բաղադրիչը, որպէս երկխօսութեան եզր, կառոյցի շրջանակներում ձեռք է բերում անձի յատկանիշ. անձնաւորւում է.

«Աչիկ, դու խաւար կենայիր, Որ էսայ բան չտեսնէիր» (320):

«Աչիկ, դու լուսով ըլնես, Որ էս բան տեսար» (321):

«Զեռիկ, դու կոտոր կենայիր, Որ ուժ էնքան չը կար քեզի» (320):

Վիպերգի մարմնարմատ դարձուածքների արտայայտութեան հարթակում որոշակի դեր ունի շրջուն շարադասութիւնը, որ կայուն կապակցութիւնը վերածում է իւրայատուկ շարահիւսական կառոյցի՝ արտայայտուած բարդ նախադասութեամբ, ինչպէս՝ երեսին մուր բնել – «անուանարկել, պատիւն արտաւորող լուրեր տարածել», շրջուն շարադասութեամբ՝

«- Զանը՛մ, էսայ ի՞նչ մուր էր՝ քըսեցինք մեր էրես» (248):

Ինչպէս ցոյց է տալիս ուսումնասիրութիւնը, վիպերգում մարմնական դարձուածքներն ունեն ոճական որոշակի արժէք. դրա ցացայայտումը, կարծում ենք, կարող է ամեռողջացնել ընդհանրաբացի Դաւիթ» վիպերգումում:

«Սասունցի Դաւիթ» վիպերգում մարմնարմատ դարձուածքների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դարձուածակազմիչ դերով հանդէս են գալիս գլուխ, աչք, ականջ, սիրտ, ոտք, ձեռք, դումկ, մէջք, երակ, արիւն, վիզ, ճակատ եւ փոր մարմբերան, երես, ծունկ, մէջք, երակ, արիւն, վիզ, ճակատ եւ փոր մարմբերան, կայուն կապակցութիւնների արտայայտութեան հարմատները, որոնք գործառական տարբեր յաճախականութիւնների կայուն կապակցութիւնների արտայայտութեան հարթակում:

Օգործածուած մարմնարմատ դարձուածքները բացայացում են ժողովրդախօսակցական լեզուի ակնյայտ ազդեցութիւնը՝ վիպերգի գեղարուեստական հիւսուածքում ստեղծելով ոճական իւրայատուկ երանգաւորում, (իմաստի սաստկացում, կրկնութիւն, աստիճանաւորում, չափազանցութիւն, նուազաբերութիւն, անձնաւորում եւ այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Լեզուի դարձուածաբանական մակարդակում որոշակի չերտ են կազմում մարմնարմատ դարձուածքները, որոնց գործածութիւնը պայմանաւորուած է նրանց ընդգծուած պատկերաւորութեամբ, քերականական պարզ կազմութեամբ, ոճական բազմազանութեամբ:

Դարձուածքների բովանդակային հարթակում մարմնարմատ դարձուածքները կամ մարմնի մասերի անուանումները հանդէս են գալիս փոխարերական իմաստներով. նոր երեւոյթներ անուանելու համար դրանք զուգորդում են նախեւառաջ մարդուն մօտ գտնըւող առարկաների հետ:

Նախապէս շրջապատող առարկաները մարդը համեմատել է իր հետ, իր մարմնի մասերի հետ: Սա խորհրդացուցական (սիմվոլիֆայի) արտայայտութիւններից մէկն է, որ դրսեւորուում է նաեւ դարձուածքների արտայայտութեան եւ բովանդակութեան հարթակներում:

Մարմնարմատ դարձուածքները համապատախանում են ժողովրդական բառ ու բանին, ներդաշնակում են պատումները, կրելով ժողովրդախօսակցական լեզուի ակնյայտ ազդեցութիւնը եւ գեղարուեստական հիւսուածքում ստեղծում ոճական իւրայատուկ երանգաւորում:

Summary

THE FUNCTIONAL VALUE AND STRUCTURAL TYPES OF SOMATIC IDIOMS IN THE EPIC "DAVID OF SASOON"

LALIK KHACHATRYAN

At the level of stable phrases of the language, a certain layer is made up of somatic phraseological units (SFU), the use of which is due to their pronounced imagery, simplicity of grammatical structure, stylistic diversity and originality of the national mentality manifesting in them. In terms of content, somatisms, or names of body parts, have metaphorical meanings: they allow you to see the presented objects and phenomena through the prism of objects and phenomena close to a person as their other hypostases, correlated in appearance or action. This is one of the manifestations of symbolism, reflected in the plans of expression and content of phraseological units.

The study of SFU in the epic "David of Sassoun" shows that the phrase-forming role in the work is played by the lexemes *head, eye, ear, heart, leg, hand, mouth, face, knee, back, blood, neck, collar, forehead, abdomen*, etc.

The SFUs have different functional frequencies in the expression of stable associations. They are used in the epic appear in various forms and are classified according to different principles: according to morphological value, according to structural types, according to nominative and communicative values, according to variants. They express the strengthening of meaning, gradation, grotesque, litotes, personification, etc.

The SFUs used in the work are in harmony with the epic plot, reflect the peculiarities of the spoken language, creating a unique stylistic palette of the artistic world of the heroic narrative. A certain layer of the SFU epic in literary treatment went into the dictionary of the modern Armenian language.